ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/30» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

գ.Ջրվեժ **«23» «հոկտեմբերի» 2019թ.**

ժամը 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Գևորգյան «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական բաժնի պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Գ.Մխիթարյան «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի տեխնիկական սարքավորումների օպերատոր

Գ. Հովհաննիսյան պահպանության գծով «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական բաժնի վարորդ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Չախոյան «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական բաժնի հաշվապահ- գանձապահ

1. «ԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/30» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման մասին

(Ա. Գևորգյան)

1.1. «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից հրշեջ մեքենայի ձեռք բերելու համար հայտարարված «ԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/30» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները:

1.2. 2019 թվականի ապրիլի 4-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ՝ մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Սալբի» ԱԿ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 5000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, ինչը չի գերազանցում է «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ ենթակետով նախատեսված սահմանաչափը՝ ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը գերազանցող:

1.3. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են aph.poak@mail.ru էլեկտրոնային հասցեին:

2. Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Հաղթող ճանաչել «Սալբի» ԱԿ-ին:

2.2. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3. Պայմանագրի կնքման նպատակով «ԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/30» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

2.4. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը. պայմանագրի կնքման համար անգործության ժամկետ չի սահմանվում:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Գևորգյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ.Մխիթարյան

Գ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար Ա. Չախոյան